**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ**
**ՏՆՕՐԵՆ**

N 152

ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, էլ. փոստ՝ info@gorismc.am
(0284) 2-21-52

«22» ապրիլ 2024թ.

**<ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի**

**ՏՆՕՐԵՆ Ա.ՇԵԳՈՒՆՑԻՆ**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի միջև 02.02.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3/5> ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծել, քանի որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված <ԼԻՆԱՐԵ> ՍՊԸ (ՀՎՀՀ 09212215)-ի հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում է նույն <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ (ՀՎՀՀ 01063047)-ի տնօրենը: <ԼԻՆԱՐԵ> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելն ինքնաբերաբար հանգեցնում է <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետը՝ <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ –ն ամբողջությամբ լուծում է <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի միջև 02.02.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3/5> ծածկագրով պայմանագիրը՝ 36,40,41,54 չափաբաժինների մասով:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները նշված չափաբաժինների մասով, ապա <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԴԱՎԻԹ ՄԱՇՈՒՐՅԱՆ**